

(ՂԱ). որպէս թէ ասով տեսակ մը հոգեւորական հաղորդութիւն կատարուէր: Ինք եղաւ այս տեսութեան հնարողը, թէ ուրիշէ փոխ առաւ, յայտնի չէ: Գիտենք միայն՝ որ նոյն յորդորը կը կրկնէ յետոյ Տաթևացին ալ (Քրզ. ձմր. 605-6): Եւ սուտ Գամասկացին կը բամբասէ զՀայս, որ գառին մսէն ուտելով՝ « ոչ հաղորդին ի մարմնոյն Քրիստոսի» (Լոյս, 1905, էջ 1114). եւ նոյն մսէն չուտողը « մեռելութի» կը կոչէին (անդ, 1906, էջ 1196), որպէս թէ հոգեւոր կենդանութեան պատճառ մը լինէր գառնը՝ նման տէրունական մարմնոյն:

7. — Սովորոյրներ: — Շնորհալին կը յիշատակէ ու կ'արգելու անպատեհ արարողութիւն մը. այն է՝ « զսեամս դրակց օծանել արեամբ գառինն», որ լսած էր թէ ազետներէ ոմանք կը գործադրէին. « զի այն հրէական է», կ'ըսէ (Ընդհ. 160), ինչպէս որ էր իսկապէս, եւ զոր սուտ Գամասկացին եւս կը հաստատէ, յաւելմամբ ուրիշ պարագայի մը. « զսեամս տանն եւ զձակատս (հաւատացելոց) արեամբ օծանելով» (Լոյս, 1905, էջ 1114). եւ ճակատինը կը կրկնէ այլուր՝ հարցնելով. « Ընդէր արեամբ գառին զրոշմեցար» եւ պղծեցիր այն զրոշմը՝ զոր ընդունեցար Յի-